

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒՂԱՐԻԱ.  
ԱՆՅՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

**Գիտաժողովի զեկույցների ժողովածու**

ԵՐԵՎԱՆ

**ԵՊՆ ՆՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**2009**

**ՆԱՅ-ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ԴԱՐԱՎՈՐ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նայերի և բուղարների միջև կապերը ձևավորվում են դերևս հեռավոր ժամանակներում: Տակավին այդ հին ժամանակից, II դարում Ք. հ. բուղար ժողովրդի նախահայրերը (պրոտո-բուղարներ), որոնք ապրել են Կովկասի փարածքում ունեցել են սերտ հարաբերություններ հայ ժողովրդի հետ: Կովկասյան բուղարների պարմությունը և նրանց գաղութները Մեծ լեռից դեպի հարավ ցայսօր չեն արժանացել լուրջ ուսումնասիրության բուղար պարմաբանների կողմից: Նիրավի, Կովկասյան ժամանակաշրջանը հանդիսանում է բուղարական պարմության կարևոր մասը: Այս հոդերիում բուղարների մասին գրված վկայությունները համեմաբար առաջ են: Բուղարիայում պարմության այս շրջանը ուսումնասիր-

ված է հերևյալ հեղինակների կողմից Վասիլ Զլաբարակի, Դիմիտր Դիմիտրով, Յվերելին Մրեպանով, Պետր Դոբրեվ, Վեսելին Բեշելիեվ, Դիմիտր Անգելով, Պետր Գոլիսկի և այլն: Նշված շրջանի առավել մանրակրկիտ ուսումնասիրությունները պարկանում են պրոֆ. Արանաս Մրամարովին (1997) և Դիմիտր Տարակովին (1999), սակայն անգամ դրանք մասնակիորեն են ընդգրկում այս ժամանակաշրջանը:

Մինչև 1989թ. հարուկ գիտական հետաքրքրության չէր արժանացել վաղ միջնադարում բուլղարների ներկայությունը Կովկասում և Նայսրանում: Այս առթիվ պերճախոս օրինակը ակադեմիկոս Դիմիտր Անգելովի «Բուլղարական ազգության կազմավորումը» մենագրության մեջ րեղ գրած Պետր Կոլեդարովի քարտեզն է: Այս քարտեզի համաձայն Վուսրով բուլղարները հասարակվել էին ոչ թե Նայսրանի հյուսիս արևմտյան մասում, այլ Վանա լճի մոտ (երևի երկու անունների Վուսրով և Վանի միջև հնչյունային ինչ-որ նմանություն կա, և նրանց այնպեղ լինելու հանգամանքը հիմնավորված չէ գիտական ուսումնասիրություններով, այլ հավանական է երկու անունների նմանության հերևանքով): Թեպետ բուլղարական ուսումնասիրողների կողմից վերջին րասը րարիների ընթացքում, մեծացել է հետաքրքրությունը Կովկասի նկարմամբ, սակայն ցայժմ քննության րորձերը լրարժեք պարկեր չեն ներկայացնում հետագուրելու համար րարածաշրջանում դեպքերն ու պրոցեսները և ավելի հարավ ընկած շրջաններում երկրորդից մինչև յոթերորդ դար և այնուհերև րասներորդ դար:

Բուլղարական պարմության մաս կազմող այս կարևոր խնդիրը, կարող է իր լուծումը գրելել շնորհիվ հինգերորդ և հերագա դարերի հայ պարմիչների՝ Մովսես Խորենացի, Եղիշե, Մովսես Կաղանկարվացի, Նովհաննես Դրասխանակերպցի և Նույնպես չաիագանց հարգելի Մարթեոս Ուռհայեցու պարմությունը, Մրեվիանոս Օրբելյանի «Պարմութին նահանգին Միսական», Թովմա Արժրունու պարմությունը, Ղազար Փարպեցու պարմությունը, Յովհան Մամիկոնյանի պարմությունը, Վարդան Մեծի պարմությունը, կովկասա-բուլղարական րարեգրությունների հավաքածու «Ջագֆար րարիիսի» և այլ աղբյուրներ, որոնք ամբողջովին կամ պակաս հայրնի են բուլղար ընթերցողին կամ պարմարանին: Այս վերոհիշյալ հայկական աղբյուրները մեղ պարկերացում են րաիս Կովկասում հին շրջանում ապրած բուլղարների կյանքի պայմաններին, սովորությունների և հայ ժողովրդի հեր նրանց շիումների ու կապերի մասին:

Ամենավաղ րեղեկությունները բուլղարների մասին հիշվում են հայոց պարմահայր Մովսես Խորենացու, Նայոց պարմությունն աշխարութ-

յան մեջ: Այս գրքում բուլղարների մասին գրվում է հերևյալը «Իսկ ինքը, արևմուրքից հավաքած բազմությունն արձակելով իջնում է Շարայի սահմանի մուրիկ խորավեր րեղերը, որ հին մարդիկ կոչում էին Անփայր կամ Վերին Բասյան, բայց հերո Բուլղար Վղնդուր Վունդի գաղթականության պարճառով, որ այղ րեղերում բնակվեց, նրա անունով կոչվեց Վանանդ. և (մուրակա) գյուղերը նրա եղբայրների և սերունդների սնուններով են կոչվում մինչև այժմ»:<sup>1</sup>

Մովսես Խորենացու պարմության համաձայն Արշակ թագավորի իշխանության ժամանակ «Մրա ժամանակ մեծ խռովություններ ծագեցին Կովկաս մեծ լեռան գուրիներում, բուլղարների աշխարհում և նրանցից շարերը հեռանալով եկան մեր աշխարհը և բնակվեցին Կողից ներքև արգավանդ և հացառապ րեղերում երկար ժամանակ»:<sup>2</sup>

Ինչպես Խորենացին վկայում է, բուլղարական մեծ խմբեր բնակություն են հասարակել Նայսսրանի Անփայր և Վերին Բասն գավառներում իրենց մեծ առաջնորդ Վինինդի<sup>3</sup> գլխավորությամբ: Իսկ Նովհանյանի<sup>4</sup> կարճիքով այն բուլղարները, որոնք բնակվել էին այս շրջանում հերագայում մոռանում են իրենց անունները և սկսում են իրենք իրենց անվանել իրենց առաջնորդի անունով: Ներո այս շրջանում ապրողները միանում են և կոչվում են Վանանդ: VII դարում մի խումբ բուլղարներ հասնում են մինչև Դանուբ գերի արևմտյան մասը խան Ասպարուիսի առաջնորդությամբ: Մի ուրիշ խումբ առաջանում է դեպի հյուսիս-արևելք և բնակություն է հասարարում Վար Կամայում և Միջին Վուգայում, իսկ երրորդ խումբը մնում է Վանանդում:

Նայ ժողովրդը՝ ունենալով լավ գարկացած մշակույթ, բազմաթիվ րնրեսական կապեր է հասարարում հարևան ժողովրդների հեր: Մերպ կապեր է հասարարում նաև պրորո-բուլղարական ցեղերին պարկանող բուր խմբերի հեր:<sup>5</sup> Կան րեղեկություններ, ըստ որոնց, հայկական մեծ համայնք գոյություն է ունեցել բուլղարների Բուգար քաղաքում, որրեղ հերագայում նվաճվել է խագարների կողմից:<sup>6</sup>

Բուլղար և հայ ժողովրդի միջև սերպ կապերը ավելի են գարգանում, երբ բուլղարների մի մասը հասարարվում է Բակկանյան թերակղզիում: Նամակներոնացված բուլղարական երկրի հասարարման գորճրևացը VII դարում ուղեկցվել է պարերագմներով և բուլղարա-սլավոնական ցեղերի անցումով դեպի Փոքր Ասիա: Բյուզանդացի պարմագեր Թեոփանը վկայում է, որ 664-թվականին շուրջ հինգ հագար սլավոններ գաղթեցին Փոքր Ասիա: Այս նույն հեղինակի համաձայն VIII դարում մեծ թվով սլավոններ Բակկանյան թերակղզուց գաղթեցին Փոքր Ասիա բյուզանդական

և բուլղարական կործանիչ պատերազմների հետևանքով, որոնք մոտ 40 տարի շարունակվեցին և Բուլղարիայի անկախության կորստյան պատճառ հանդիսացան 1018 թվին: Այնուհետև սլավոնական նոր խմբեր շարժվեցին դեպի Փոքր Ասիա:

Այսպես, բուլղար ժողովրդի ու երկրի ձևավորումից շատ ժամանակ առաջ, հենց սկզբից, հայ ժողովուրդը կապեր է ունեցել պրոպո-բուլղարական ցեղերի հետ: Այս կապերը էլ ավելի են սերտանում Բալկանյան թերակղզիում բուլղարական պետության կազմավորումից հետո: Ներագայում այս հարաբերությունները փոխափոխվում են Բալկանյան թերակղզին, քանի որ հայկական գաղթը դեպի Բուլղարիա և բալկանյան այլ երկրներ անհամեմատ ավելի մեծ էր, քան բուլղարների գաղթը դեպի Փոքր Ասիա և Հայաստան:

Միջին դարերում հայերի ներկայության հարցը, որպես էթնիկական տարր բուլղարական երկրում, միշտ դուրս է մնացել բուլղար պատմագետների ուսումնասիրության ոլորտից: Պատմական գրականության մեջ, հայերը հիմնականում հիշատակվում են բյուզանդական կայսրերի VIII–Xդդ. գաղութարարական գործունեության և Բուլղարիայում Պավլիկյանների երևան գալու կապակցությամբ: Բալկանյան թերակղզիում XI–XIVդդ. ընկած ժամանակաշրջանի դեպքերի վերլուծությունից, առավել ուշադրություն է դարձվում III խաչակրաց արշավանքին և Կարդյան թագավորի պատերազմներին լատինների դեմ թրակիայում: Ավելի ուշ XIII–XIV դարերում աղոտ փեղեկություններ կան հայերի գոյության մասին մի քանի բուլղարական քաղաքներում: Բացի սրանից, հայերով բնակեցված շատ վայրեր, որոնք սովորաբար մտել են բուլղարական պատմության մեջ, նշված են, որպես թրակական կամ հարավ մակեդոնական վայրեր:

Ավելի մեծ կամ փոքր հետաքրքրություն հայերի (և Պավլիկյանների) դերի և կարևորության մասին բուլղարական հողերում ցուցաբերեցին փորձեր հեղինակներ Սուրեն Նովնանյան, Հրաչ Բարսիկյան, Վ. Ա. Նաբոթյունովա-Ֆիդանյան և Աշոտ Աբրահամյան, Նակոբ Զյուրդյան (Իփախայում), Նիկողայոս Ադոնց (Բելգիայում) և Բուլղարիայում մի քանի բուլղար և հայ գիտնականները, ինչպես Դիմիտր Անգելովը, Միլտո Յովքովը, Ներսես Ղասաբյանը, Արա Մարկոսը, Ստեփան Ագուբյանը, Նելլի Չանեվա-Դեչևսկար, Նակոբ Օրմանջյան, Միլադին Ապոստոլով, Նակոբ Կարապետյան, Եվգենիա Միցեվա, Կարո Հայրապետյան, Միհրան Պողոսյան, Ե. Սելյան և ուրիշներ: Այլ և այլ պատճառներով, այս հեղինակների մեծ մասը ոչ անմիջականորեն, երբեմն էլ պատահականորեն անդրադարձել և քննել է միջնադարում հայերի ներկայությունը բուլղարական

հողերում: Նրանք այս պրոբլեմը քննել են լոկ անհատական ասպեկտ-ստանդարտ փեղեկություն փալու հայերի գաղթերի մասին բուլղարական հողերում, Բաչկովո վանքի պատմության, հայ բժիշկ Ամիրթովլաթ Ամասիացու գործունեության մասին Պլովդիվում, Մամվիլ թագավորի հայկական ծագումի հավանականության վերաբերյալ, հայ հեղինակների և թարգմանությունների մասին և այլն: Այս հեղինակների կարևոր մասը բուլղարիայում ուսումնասիրում է պատմության ավելի ուշ ժամանակաշրջան. այսինքն բուլղարական հողերում հայ գաղութների զարգացումը միջնադարում և դրանց հետ կապված մշակութային հարցեր, որտեղ միջնադարը նրանց համար մեկնակետ է և ոչ թե լուրջ ուսումնասիրության առարկա: Սրանք հարկապես վերաբերում են փնտրական կոնկրետ ուսումնասիրություններին, կամ էլ կապված են նոր և արդի ժամանակներում բուլղարիայում հայերի կեցության և մշակութային հարցերի հետ: Նույնիսկ Սուրեն Նովնանյանի և Աշոտ Աբրահամյանի աշխատանքներում, որոնք մանրամաստրեն ուսումնասիրում են միջնադարում հայերի ներկայությունը բուլղարական հողերում, հանդիպում ենք բացթողումների, որոնք այսօրեղ Բուլղարիայում հեշտությամբ կարելի է լրացնել:

Ստացած փեղեկությունների համաձայն, հայկական առաջին զանգվածային գաղթերը սկսած են դեռևս V դարում: 451 թվականին հայերի և պարսիկների միջև փեղի ունեցած Վարդանանց (ազգային հերոս Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ) պատերազմից հետո, Արտավան և Գագրիկ իշխաններն իրենց ջոկատներով անցնում են Բյուզանդիա: Ավելի ուշ, Լեո I կայսրը (457-474) որոշում է Մակեդոնիայի Նիքեա քաղաքը որպես գաղթականների գաղթավայր: Մի այլ հայկական գաղթ Բյուզանդիա հիշատակվում է 542-ին: Պատմաբան Պրոկոպիոս Կեսարացու համաձայն, բյուզանդա - պարսկական պատերազմի ժամանակ հայերի զգալի թվաքանակ անցնում է բյուզանդական կայսրության կողմը: Հուսփինյանու I կայսրը ընդունում է նրանց և հաստատում Կոստանդնուպոլսում, Թրակիայում և Մակեդոնիայում:<sup>7</sup>

Հայերի արտաքսման մշտական և սիստեմատիկ քաղաքականությունը դեպի Բալկանյան թերակղզի հասցրեց նույնիսկ բյուզանդացի կայսր Մորիկի (582-602) հայկական ծագում ունենալու հանգամանքին՝ ըստ հայ պատմիչ Սեբեոսի այս կայսրը Պարսկաստանի Խոսրով II արքայից արքային ուղարկած հռչակավոր նամակում, ծրագիր է առաջարկում, ըստ որի, միասնական բյուզանդա-պարսկական ջանքերով ապագայնացնել Հայաստանը:

Այս ժամանակ հույն կայսր Մորիկը հրամայեց մեղադրական նամակ գրել պարսից թագավորին բոլոր հայ իշխանների դեմ: Նա ասում է այս մարդիկ համառ և անհնազանդ են, նրանք ապրում են մեր մեջ և փագնապ են փարածում: Թող որ ես վերցնեմ ինը (հայերին) և ուղարկեմ Թրակիա, դու նույնպես վերցրու բոնը և հրամայիր, որ նրանց ուղարկեն արևելք: Ռոբվիեդը եթե նրանք մեռնեն թշնամիները կմեռնեն, իսկ եթե ուժ մեկին սպանեն թշնամուն կսպանեն, և մենք հանգիստ կապրենք: Ինչքան ժամանակ նրանք իրենց երկրում են, այդքան ժամանակ մենք չենք կարող հանգստանալ:՝<sup>8</sup>

Համաձայն իր քաղաքականության, Մորիկը հրամայում է Հայաստանում երկու հեծյալ գունդ կազմել 589-590թթ. և նրանց Թրակիա ուղարկել: Մի գնդի առաջնորդ ընտրվեց նախարար Սահակ Մամիկոնյանը, իսկ մյուսի նախարար Սմբատ Բագրատունի: Սահակ Մամիկոնյանը իր գունդը փանում է Կ.պոլիս, սակայն Սմբատ Բագրատունու գունդը ապստամբում է և մերժում է առաջ գնալ պարճառաբանելով, որ ավելի լավ է զինվորները մնան փունը և մեռնեն հայոց հողի վրա, քան կռվել օտար հողում և մեռնեն այնտեղ:<sup>9</sup>

Հայկական գնդի ապստամբությունը չի հանդիսանում լուրջ արգելք Հայաստանում խափանելու նոր բյուզանդական զինահավաքի կազմակերպումը: 602 թվականին Մորիկը հրովարտակ է հրատարակում, որի համաձայն Հայաստանը իբրև հարկ, պետք է հատկացնի 30 000 զինվոր և իրենց ընտանիքների հետ ուղարկել Թրակիա ավարներին և բուլղարներին ետ մղելու համար: Պաշտոնյա Պրիսկը ուղարկվում է Հայաստան փեղում հրովարտակը կիրառելու, սակայն այս ընթացքում Մորիկը գահընկեց է լինում Դանուբյան գնդի ապստամբության պատճառով և 150 000 հայերի արտաքսման հսկայական պլանը չի իրագործվում:

X-րդ դարից հետո, Պավլիկյան շարժումը Բուլղարիայում մեծանում է, որի հետևանքով շարք հայեր բնակություն են հաստատում Օսըմ գետի հովիտի երկարությամբ, Պլովդիվ և Կարլովո քաղաքների միջև ընկած վայրում, իսկ XII-ից դարից հետո, նաև Դանուբ գետի երկարությամբ և Բուլղարիայի հյուսիսում: X-րդ դարում, հաստատվում են մի քանի հայկական գաղութներ և ձևավորում են հայկական եկեղեցական առաջնորդություն:

Գաղթականության պրոցեսը նույնպես շարունակվում է արաբների, պարսիկների և թուրքերի հաճախակի հարձակումների ժամանակ և հատկապես թուրք-պարսկական պատերազմի ընթացքում՝ XVII-րդ դարի սկզբին, երբ փնտրեաական և քաղաքական ճգնաժամ է փրկում Հայաստան:

նում:<sup>10</sup> Հայերի հոսքը դեպի Բուլղարիա հեշտանում է դրանով, որ երկու ժողովուրդները լինելով սրբկության մեջ, եղել են նույն Օսմանյան կայսրության հպարակ: Անկախությունից հետո 1884 թվականին կապարած պաշտոնական մարդահամարի փվյալների համաձայն, հայերի թվաքանակը Իշխանական Բուլղարիայում եղել է 4000, իսկ Արևելյան Ռումելիայում (Բուլղարիան բաժանված էր երկու մասի) 1300:<sup>11</sup>

Հայերի մյուս զանգվածային գաղթը դեպի Բուլղարիա փեղի ունեցավ 1896-1915թթ. ցեղասպանություններից հետո: 1919-1922թթ. հույն-թրքական պատերազմից հետո, հայերն ստիպված են լինում հեռանալ թրքերից փրկվելու համար: 1922 թվականին Բուլղարիայի թագավոր Բորիս III-ի կառավարությունը հրաման է փալիս, որ Բուլղարիայի սահմանները բացվեն փախստական հայերի համար նրանց ապաստարան փալով: այս ընթացքում Բուլղարիա են գաղթում 25 000 հայ:<sup>12</sup> Բուլղարիայում ապաստան գրած հայերը շուրտվ հաստատվում են նոր վայրին և կյանքին դառնալով երկրի անբաժանելի մի մասնիկ, միևնույն ժամանակ պահպանելով իրենց ինքնությունը, սովորույթները և ազգային ինքնագիտակցությունը:

Կա ևս մի կարևոր ասպեկտ հայ-բուլղարական կապերի, այն է հայերի մասնակցությունը բուլղար ժողովրդի ազատագրական պայքարում թրքերի դեմ: Այս ժամանակ եկեղեցու հետ կապված հարցը, դառնում է ինչպես Խրիստո Բոթեվն (բուլղար մեծ բանաստեղծ և հեղափոխական) է ասում, քաղաքական և ազգային էական հարց: Բուլղարիայում ապրող հայերը մասնակցում են բուլղարների հետ հանուն եկեղեցվո բուլղարների մղած մարտերում. նույնիսկ երբեմն դարձել նրանց ներշնչողները: Հայկական փալագրիչները Կ.պոլիսում Տ. Դավիթյան, Ա. Մինասյան, Ա. Բոյաջյան, Դ. Արամյան և ուրիշներ փալում և փարածում են բուլղարերեն լեզվով բազմաթիվ գրքեր և պարսավագրեր, որոնք մղում են ժողովուրդը ապստամբելու հունական եկեղեցու և նրա բուլղար ծառայողների դեմ:

Հայ հոգևորականությունը և այնուհետև Կ.պոլիսի պարտիարք Մկրտիչ Խրիմյանը նույնպես մասնակցում էին Բուլղարիայում հայտարարված եկեղեցական պատերազմին: Նա (պարտիարքը) հաճախ խորհուրդ էր փալիս բուլղար հոգևորականությանը զգույշ լինել, երբ բողոք են ներկայացում թուրք կառավարության կամ հույն հոգևորականների դեմ: Նա նույնիսկ հաստատում է իր դիրքորոշումն այն մասին, թե «ինչպես ուրիշ ժողովուրդ, այնպես էլ բուլղարները իրավունք ունեն ունենալ անկախ եկեղեցի և հոգևոր առաջնորդ»<sup>13</sup> Ազգային շարժման զարգացման և ուժեղացման հետևանքով թուրքական կառավարությունը ստիպված է լինում դիմել զի-

շումների: 1870 թվականի փետրվարի 28-ին սուլթանը հրամանագիր է փալիս, որի համաձայն թույլ է փրվում բացարձակապես հասարակել ինքնուրույն և անկախ բուլղարական եկեղեցական կենտրոն - Էկզարխություն (հովվություն): 1872թ. բուլղարական հովվությունը վերջնականապես ճանաչված է լինում և առաջին անգամ Էկզարխ է նշանակվում Անտիոք I: Նորաստեղծ բուլղարական Էկզարխիան հասարակվում է Կ.պոլիսի հայերով բնակեցված մի շրջանում Օրթոդոքսությունում. Իսկ Մկրտիչ Խրիմյանը առաջինն էր, որ պաշտոնապես ճանաչեց բուլղարական եկեղեցվո անկախությունը և սերտ կապեր հասարակել բուլղարական հովվության հետ:<sup>14</sup>

Նայ-բուլղարական կապերը շարունակում են ուժեղանալ ռուս-թուրքական ազատագրական պայքարազմի փորձերին 1877-1878թթ.: Նրանք երկու ժողովուրդները, այս պայքարազմը համարեցին միակ պայքարի հնարավորությունը, իրենց երկրները ազատագրելու թրջական սպրկությունից: Ինչպես ռուսական բանակում ծառայող մեծ թվով հայեր, այնպես էլ Բուլղարիայում ապրող հայերը մասնակցեցին ռուս-թուրքական (1877-1878) պայքարազմին:

Այս հարցը ոչ միայն կապված է երկու ժողովուրդների պայքարության, այլ նաև նրանց մշակույթների հետ: Ներաբերքի է, հետևել նրանց միջև մշակութային հարաբերությունների զարգացմանը և իմանալ ինչպիսի կարծիք են ունեցել միմյանց նկատմամբ:

Ընդանրապես, բուլղարացիների մոտ գերիշխող է այն կարծիքը, թե նրանք ճանաչում են հայերին: Տիրավի, որոշ չափով սա այսպես է: Բացի ուղիղ, անմիջական շփումներից և գաղափար կազմելու համար այս հարցում (փվյալ դեպքում հայերի մասին), նրանք օգնում են մի քանի փապագրական հրատարակություններին, ինչպես թերթեր և գրական սրեղծագործություններ. այդ մասին վառ օրինակ է հայերեն գրականություն ներկայացնելու փորձը բուլղար ընթերցողին, նույնպես բուլղարական գրականություն հայ ընթերցողին: Դժբախտաբար այս գործընթացը բավական մեղմացել է: Բուլղարիայի համար, որպես ակտիվ ժամանակաշրջան կարող ենք համարել XX դարի 30-40 ական թվականները: 1960-ական թվականներին հայերենից բուլղարերեն են թարգմանվում մի քանի հայ գրողների և բանաստեղծների երկերը - Բաճիկ, Ծիրվանգաղեի, Վահան Թորոմեցի, Միլվա Կապուրիկյանի, Եղիշե Զարենցի, Նահապետ Բուզակի և այլն: 1975-ին բուլղարերենով լույս է տեսնում «Նայկական պարմավաճքների» մի ժողովածու, ընդգրկելով 53 գրողների գործերը: Չնայած գործունեության անբավարարության, սակայն որոշ գաղափար է փալիս մեր մեջ ապրող հայերի և նրանց մշակութային պայքարության մասին:

Նոր փալի գործիչներ են այն հայերը, որոնք ծնվել են և գրում են Բուլղարիայում: Նրանց սրեղծագործության թեման կապված է Նայաստարանի հետ (Սևդա Սևան) կամ հայկական ոգու հետ (Նակոբ Մելքոնյան, Գրիգոր Փափագյան և ուրիշներ):

Շուրով սկսեցին մի շարք ուսումնասիրություններ բուլղարա-հայկական կապերի մասին: Այս կապակցությամբ «Պարմական, մշակութային և գրական կապերը բուլղարների և հայերի միջև» (Ջինգոզյան, Գրիգորյան) ժողովածուն առաջին գործերից է, որտեղ ներկայացված են երկու ժողովուրդների միջև համագործակցության փորձեր ոլորտներ, մեր կապերը դարերի ընթացքում, կամավոր հայերի մասնակցությունը Բալկանյան պայքարազմներում, հայկական ճարտարապետության արտացոլումը բուլղարական միջնադարյան ճարտարապետության վրա, հայ բժիշկների գործունեությունը Բուլղարիայում անկախությունից հետո, հայ-բուլղարական գրական կապերը և այլն:

Մեկ այլ հետաքրքիր հանգամանք ևս: Բուլղարական մամուլում ներկայացված հայերի կերպարը: Այս կապակցությամբ հատուկ հետաքրքրություն է ներկայացնում 1941թ. 27 ապրիլի «Երթ» թերթի 59/63 համարը: Ամբողջ համարը նվիրված է հայերի պայքարության, գրականության, հայոց եղեռնին և Բուլղարիայում ապրող հայերի կյանքին: Այս հոդվածները արտացոլում են բուլղար ժողովրդի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: Առաջին էջը նվիրված է եղեռնին: Հոդվածը գրված է Սոֆիայի եպիսկոպոս Ստեփանի կողմից, որն ասում է «գարմանահրաշ մի նմանություն միացնում է հայերին և բուլղարներին ընդհանուր, խոր և ողբերգական ճակատագրով...»: Նա նկարագրում է իր խոր զգացմունքները հայոց ողբերգության և Եվրոպայի անփորձության նկատմամբ:

Նույն թերթի առաջին էջի վրա փրված մեկ այլ հետաքրքիր հոդված «հայերը Բուլղարիայում» Կ. Դինոլովի հեղինակությամբ է: Այս հոդվածը ուսումնասիրում է հայերի գաղթերը Բուլղարիա: Նեղիհակը գրում է «Նայերը Բուլղարիայում ճանաչված են որպես երկրի համեստ, խաղաղ, լավ և շատ աշխատասեր քաղաքացիներ: Նրանք բուլղարներին համահավասար սիրում և աշխատում են Բուլղարիայի համար»:

Այս համարում, գրված հոդվածներ կան ինչպես բուլղարների, այնպես էլ հայերի կողմից հայ գրականության, պայքարության, կյանքի և սովորույթների մասին: Այն փաստը, որ ամբողջ թերթը նվիրված է հայերին, խոսում է երկու ժողովուրդների միջև եղած կապերի և իրար նկատմամբ փառած զգացմունքների մասին: Սրանք լույս չեն մասն են այն բուլղարից,

որ գրված են մեր երկու ժողովրդների բարեկամության մասին: Սակայն, կարծում եմ, այդ չնչին գրվածներն էլ խոսուն օրինակներ են:

1. Մովսես Խորենացի, «Նայոց պատմություն», Երևան, 1982, էջ 123:
2. Նույն տեղում, Երևան, 1982, էջ 135:
3. Նույն տեղում, Երևան, 1982, էջ 123:
4. Ս. Նովնանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 20:
5. Ս. Նովնանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 20:
6. Մմիռնով Ա. Պ., Վոլկային բուլղարները, Մոսկվա, 1951, էջ 189-190:
7. Աբրահամյան Աշոտ, Վամառտո ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմություն, հ. 1, Երևան, 1984, էջ 310:
8. Մեքենո «Մեքենո եպիսկոպոսի պատմությունը Ներակլի մասին» (ռուսերեն), Մոսկվա 1862, էջ 52:
9. Աբրահամյան Աշոտ, Վամառտո ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմություն, հ. 1, Երևան, 1984, էջ 311:
10. Ս. Նովնանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 5:
11. Ս. Նովնանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 164-165:
12. Միցեվա Ե., Նայերը Բուլղարիայում – մշակույթ և ինքնություն, էջ 25:
13. Ս. Նովնանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 83-88:
14. Ս. Նովնանյան, «Նայ բուլղարական պատմական կապերը և Բուլղարիայի հայ գաղթօջախը XIX դ. երկրորդ կեսին» (ռուս., Երևան, 1972 թ.), էջ 83: